ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՍՀԳ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.01.2020թ. ժամը 15-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՍՀԳ-20/2» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. *«Կոմպմարկետ» ՍՊԸ (ք. Երևան, Գյուլբենկյան 27/1)*
2. *«Կոմպասս» ՍՊԸ (ք. Երևան, Չարենցի 66)*
3. *«Վանդիստ» ՍՊԸ (ք. Երևան, Նալբանդյան 17/30)*
4. *Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի(ք. Երևան, Արշակունյանց 69/5)*

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ **Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի** կողմից ներկայացրած հայտի, որում բացակայում է **հայտի ապահովումը:**

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 «Կոմպմարկետ» ՍՊԸ –ի, «Կոմպասս» ՍՊԸ –ի և Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 **«Վանդիստ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ կա անհամապատասխանություն. Հրավերի 1-ին մասի 7.4 կետով պահանջվում է որպիսի Հայտի ապահովումը վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 աշխատանքային օր, սակայն Կազմակերպության կողմից ներկայացված Հայտի ապահովումը վավեր է 68 աշխատանքային օր:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Նախահաշվային գին	Ընդհանուր քանակը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/			
				«Կոմպմարկետ» ՍՊԸ	*«Կոմպասս» ՍՊԸ*	*Ա/Ձ Արթուր Հարությունյան Սերյոժայի*	*«Վանդիստ» ՍՊԸ*
1	սեղանի համակարգիչներ	11970000	57	9216900	9861000	9930000	9975000

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ նիստը կասեցնել է մեկ աշխատանքային օրով, որպիսի Ա/Ձ Արթուր Հարությունյան Սերյոժայի-ն և «Վանդիստ» ՍՊԸ-ն շտկեն անհամապատասխանությունները: Հաջորդ նիստը հրավիրել 2020թ. հունվարի 29-ին, ժամը 11:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Քարտուղարին՝

ARMEPS համակարգի միջոցով այսօր տեղեկացնել Ա/Ձ Արթուր Հարությունյան Սերյոժային և «Վանդիստ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է. Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՍՀԳ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.01.2020թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

<u>Անհամապատասխանությունները վերացնելու մասին</u>

Ա/Ձ Արթուր Հարությունյան Սերյոժայի-ն և «Վանդիստ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

1. Ընթացակարգի **ընտրված** մասնակից ճանաչել **«Կոմպմարկետ» ՍՊԸ** -ին:
2. Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«Կոմպասս» ՍՊԸ -ին:**
3. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
4. Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
5. «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՍՀԳ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է. Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան